ԱՐԱՏԵՍԻ ԴՊՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ. ԴՊՐՈՑ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

2021Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ

Արատեսը շուրջ տարին գործում է որպես դպրոց բնության գրկում՝ ուսումնական նախագծերի, ճամբարների, ստեղծագործական հավաքների հարթակ: Իրականացվող նախագծերի ուղղություններ են՝

- հայրենագիտական՝ ծանոթություն Եղեգիսի կիրճի գյուղերին, բնության, պատմության հուշարձաններին, բնապահպանական, մշակութային, հանրային խնդիրներին.
- արշավախմբային-զբոսաշրջային՝ քայլքի երթուղիներ, նկարագրություն, նոր արահետներ
- գյուղական տնտեսության-երկրագործական աշխատանք՝ տարածքի, տնակների, բակերի խնամք, բարեկարգում, մեղվաբուծություն, պտղատու ծառերի խնամք, բերքահավաք, ծառատունկ՝ պտղատու այգու, նոր անտառի ստեղծում, խոտհունձ, աշնանային մառան, այլ աշխատանք.
- մշակութային՝ փառատոնային նախագծեր, պլեներ, ծեսի, տոնի կազմակերպում.
- բնագիտական-բնապահպանական աշխատանք՝ ապարները, հանքեր, անտառներ, գետ, դրանց խնդիրները, աղբի տեսակավորում.
- Արատեսյան արհեստանոց-արվեստանոց-լաբորատորիաների ստեղծում:

Տեղեկանքով ներկայացնում ենք արատեսյան նախագծերի հոկտեմբերի օրացույցը: Վայոց ձորի դպրոցների խմբերը, անհատ սովորողներ, ուսուցիչներ կարող են ներգրավվել նախագծերում իրենց հայտով կամ մարզպետարանի կրթության վարչության ներկայացմամբ:

- Կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագրի ուսումնական պլանով որոշված ռազմամարզական ճամբար՝ հոկտեմբերի 8-10
- ամենշաբաթյա հայրենագիտական, բնապահպանական, երկրագործական եռօրյա ճամբարներ (ամեն ուրբաթ, շաբաթ, կիրակի օրերին).
- մանկավարժական բաց ճամբար հոկտեմբերի 8-10-ին.
- մրգատու ծառատունկ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC), «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի աջակցությամբ.
- աշնանային գյուղական ճամբար հոկտեմբերի 25-31-ը.

- նախասիրությունների զարգացման ակումբների, մասնագիտական ուսուցման, խորացված ուսուցման ծրագրերով ստեղծագործական հավաքներ:

Հավաքների օրացույցին, իրականացվող նախագծերին, լուսաբանմանը կարող եք հետևել կրթահամալիրի բազմալեզու mskh.am-ում, ուսումնական բլոգներում, սոցցանցում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ ***ՍՈՒՍԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ***